ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2026 թվականի N 1611-Լ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «բ» պարբերությամբ և 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) բազմազավակ ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի (այսուհետ՝ ծրագիր).

2) ծրագրի իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ծրագրի իրականացման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության միասնական սոցիալական ծառայությանը:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում հաստատել ծրագրի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության աշխատանքի

և բարեկեցության նախարարության միասնական սոցիալական ծառայության և առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի, սույն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հավաստագրերի օրինակելի ձևերը, ինչպես նաև սույն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետով սահմանված դրական մնացորդով ձեռք բերվող կահույքի և կենցաղային տեխնիկայի ցանկը:

4. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության և «Բարեկեցության տեղեկատվական համակարգերի ձեռնարկություն» հիմնադրամի հետ համագործակցելով՝ ապահովել սույն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջի ստուգման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացումը տեղեկատվական համակարգերի փոխգործելիության միջոցով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ